

ոչ լուեալ զքարոզ եւ ոչ զկերպ քարոզութեան, ոչ զերրորդութեան քննութիւն եւ ոչ զմարդեղութեան Տեառն տաւայ տալապայ՝ թէ Քրիստոս երկու բնութիւն իցէ՝ թէ մի, . . . այլ միայն՝ թէ Քրիստոս: Ես կարծեմ թէ զաստուածութիւն այլ չգիտէր, այլ միայն վկայեաց հաւատոյն իւրոյ՝ թէ իմն ճշմարիտ է եւ զձեր մարմնաւորն ես չեմ բնդունիր. խոտեաց զփառսն, անարգեաց զկենդանութիւն, մեռաւ կամաւորապէս վասն հաւատոյն իւրոյ ի մէջ բազմամբոխ քաղաքիս առաջի աշխարհակալ բռնաւորաց, որ աչօք բացօք զսուրն սրեալ ի ձեռն գահճին՝ տեսանէր զի գայր ի վերայ պարանոցին: Արդ, ասա՛ ինձ, ո՛վ փառասէր քարոզօղ եւ մոնթատէր պատուամեծար բարունի, կըշռեա՛ զգիտութիւն քո եւ զնորայն, ի քե՞զ հանգչի Տէր նորա թէ ի նա, զնա՞ փառաւորէ թէ զքեզ, որպէս Գիրք վկայեն: Սիրելի որդեա՛կ, մի՛ մոռանար զերախտիսն՝) իմ ի Տէր, ես այս հաւատովս եմ, ես կու մեռնիմ կու զնամ, քեզ ամանաթ այս հաւատս, ծաղկեցո՛ եւ պողաբերեա՛: Ես վասն այս հաւատոյս զփառսզ զայդոսիկ չստացայ, ի մեծարանաց փախեայ, ես այս մէզհէպիս մէջն եմ: Կաթողիկոս եւ ժամկոչ, աշխարհակալք եւ ուսմիկք հաւասարք են առաջի Աստուծոյ, մանաւանդ եւ ի ժամ միւսանգամ դալստեան Տեառն՝ յորժամ աթոռք զատողութեան դնին: Վասն որոյ պինդ կա՛լ զաւանդն որ ի Տեառնէ. ամա՛ն կանչեմ քեզ, հարա՛յ գոչեմ՝) քեզ, ծառայեա՛ ծառային Աստուծոյ Պօղոսի, հետեւեա՛ ձայնին, մեծ հաւատարիմ առաջնորդ է մեզ զկնի անկեալ Քրիստոսի: Կարդա՛ զոր գրեցի քեզ ի ստանալն քո զկուսակիօն կարգն որ ի Քրիստոսէ, ընթերցի՛ր միշտ եւ որ յիդ՝ միւսին գրեցի քեզ՝ օրինակ տալով զգէմս եւ զնմանն,

1) զերախտիսն.

2) գոչեմ.